ԳՆՈՒՄՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ք. Երևան 09.09.2013թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ԳԲԽ-39/13 բողոքը քննող հանձնաժողովի

ԳԲԽ-39/13 բողոքը քննող հանձնաժողովը՝ գործելով գնումների բողոքարկման խորհրդի անունից, քննելով «Էլդոգար» ՍՊԸ-ի կողմից 20.08.2013թ «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին ներկայացված բողոքը, ինչպես նաև ուսումնասիրելով ԳԲԽ-39/13 բողոքի վերաբերյալ «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից ներկայացված եզրակացությունը պարզեց.

1. **<u>«Էլդոգար» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստերը, հիմնավորումները և պահանջը.</u>**

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին ներկայացված բողոքով «Էլդոգար» ՍՊԸ-ն հայտնել է, որ «ՍՄՔԳ-ՊԸԱՇՁԲ-13/1» ծածկագրով պարզեցված ընթացակարգի հայտարարությունը հրապարակվել է 01.08.2013թ. և նույն հայտարարությամբ սահմանված է եղել հայտերի ներկայացման վերջնաժամկետ 10.08.2013թ. ժամը 11:00-ն ինչը հանդիսանում է ոչ աշխատանքային օր (շաբաթ): «Էլդոգար» ՍՊԸ-ն հրավերով սահմանված կարգով նախապես ներկայացրել է իր հայտը, սակայն հաշվի առնելով, որ 10.08.2013թ. ոչ աշխատանքային օր է և հայտերի բացման նիստը «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի համաձայն այս դեպքում տեղափոխվում է հաջորդ աշխատանքային օրը, մասնակիցը երկուշաբթի՝ 12.08.2013թ. ժամը 10:00-ին ներկայացել է Քարահունջի գյուղապետարան՝ ՀՀ Սյունիքի մարզ, գ. Քարահունջ, փողոց 10/14 հասցեով հայտերի բացման նիստին և պարզել, որ գնահատող հանձնաժողովը հայտերը բացել է 10.08.2013թ. և հաղթող ճանաչել «Նյու Թերմ» ՍՊԸ-ին, ինչի արձանագրությունը տրամադրվել է ընկերությանը: «Էլդոգար» ՍՊԸ-ի խնդրանքով, ուսումնասիրության համար վերջիններիս է տրամադրվել «Նյու Թերմ» ՍՊԸ-ի

հայտի պատճենը, ինչի ուսումնասիրությունից պարզվել է, որ «Նյու Թերմ» ՍՊԸ-ի շինարարության իրականացում ըստ քաղաքաշինության բնակելի, հասարակական և արտադրական ոլորտի լիցենզիայի ներդիրում որպես որակավորված մասնագետ նշված է եղել Էդգար Էլյազյանի (անձ. AE 0402192) անունը՝ ով հանդիսանում է «Էլդոգար» ՍՊԸ-ի տնօրենը և «Էլդոգար» ՍՊԸ-ի վերոհիշյալ լիցենզիայի որակավորված մասնագետը: Ընկերությունը տեղեկացրել է հանձնաժողովին, որ Էդգար Էլյազյանը բացի «Էլդոգար» ՍՊԸ-ից ոչ մի այլ ընկերության, տնտեսավարող սուբյեկտի մոտ չի աշխատում և ոչ մի տեսակի աշխատանքային պայմանագրեր չի ստորագրել, ուստի «Նյու Թերմ» ՍՊԸ-ում չի աշխատում և չի կարող հանդես գալ որպես որակավորված՝ լիցենզավորված մասնագետ և հետևաբար «Նյու Թերմ» ՍՊԸ-ն՝ համաձայն իր կողմից ներկայացված N 12994-01 լիցենզիայի չունի լիցենզիայի համար որակավորված մասնագետ, հետևաբար այդ լիցենզիան պետք է լինի կասեցված, ինչն էլ իր հերթին հակասում է «Նյու Թերմ» ՍՊԸ-ի հայտում առկա հավելված 2-ի 6-րդ կետով կատարված հայտարարությանը:

Բողոքաբեր ընկերությունը նշել է, որ հանձնաժողովը և պատվիրատուի ղեկավարը վերոգրյալն անտեսել են և պարզաբանել են, որ ամեն ինչ օրենքով է: «Էլդոգար» ՍՊԸ-ն գտնում է, որ գնահատող հանձնաժողովի կողմից խախտվել է «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 83-րդ հոդվածը, «Գնումների մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասը, ինչպես նաև «Գնումների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի բ. ենթակետի համաձայն ներկայացվել է կեղծ տվյալ:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ «Էլդոգար» ՍՊԸ-ն խնդրել է «ՍՄՔԳ-ՊԸԱՇՁԲ-13/1» ծածկագրով պարզեցված ընթացակարգը չեղյալ հայտարարել գնահատող հանձնաժողովի կողմից «Գնումների մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի պահանջները խախտելու հիմքով և «Նյու Թերմ» ՍՊԸ-ի կողմից հայտով ներկայացված N 12994 լիցենզիան համարել կեղծ տեղեկություն և ապահովել պատվիրատուի ղեկավարի, գնահատող հանձնաժողովի կողմից ընթացակարգի մասնակցի կողմից կեղծ տեղեկություններ ներկայացնելու համար Հրավերի 8.5 կետով սահմանված գործառույթների իրականացումը:

2. **<u>Քարահունջի գյուղապետարանի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստերը և հիմնավորումները</u>**.

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ը 21.08.2013թ. N 06/032-1153 գրությամբ դիմել է Քարահունջի գյուղապետարանին՝ խնդրելով կարծիք տալ «Գնումների աջակցման

կենտրոն» ՊՈԱԿ-ում 20.08.2013թ. «Էլդոգար» ՍՊԸ-ի կողմից ներկայացված բողոքի վերաբերյալ:

Քարահունջի գյուղապետարանը 26.08.2013թ. N 0-3/31 գրությամբ Կենտրոնին է տրամադրել «ՍՄՔԳ-ՊԸԱՇՁԲ-13/1» ծածկագրով պարզեցված ընթացակարգին վերաբերող բոլոր փաստաթղթերի, ինչպես նաև «Էլդոգար» ՍՊԸ-ի և «Նյու Թերմ» ՍՊԸ-ի հայտերի պատճենները և 23.08.2013թ. N 03-29 գրությունը, որով «Էլդոգար» ՍՊԸ-ի կողմից ներկայացված բողոքի վերաբերյալ հայտնել է հետևյալը.

ՀՀ Սյունիքի մարզի Քարահունջի գյուղապետարանը չի առարկում «ՍՄՔԳ-ՊԸԱՇՁԲ-13/1» ծածկագրով պարզեցված ընթացակարգը չեղյալ հայտարարելուն, քանի որ գնահատող հանձնաժողովը հայտերը բացել է 10.08.2013թ-ի ժամը 11:00-ին, որը ոչ աշխատանքային օր է:

Քարահունջի գյուղապետարանը հայտնել է, որ լիցենզիայի հետ կապված գնահատող հանձնաժողովը թերություններ չի հայտնաբերել, իսկ «Նյու Թերմ» ՍՊԸ-ն ներկայացրել է համապատասխան լիցենզիա:

<u>3. ԳԲԽ-39/13 բողոքի վերաբերյալ «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի դիրքորոշումը.</u>

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ը հանձնաժողովին ներկայացրել է իր եզրակացությունը և առաջարկել է «Էլդոգար» ՍՊԸ-ի կողմից 20.08.2013թ. «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին ներկայացված բողոքը բավարարել մասնակի՝ դադարեցնել ՀՀ Սյունիքի մարզի Քարահունջի գյուղապետարանի կողմից Քարահունջ համայնքի մշակույթի տան վերանորոգման աշխատանքների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՍՄՔԳ-ՊԸԱՇՁԲ-13/1» ծածկագրով պարզեցված ընթացակարգը:

<u>4. ԳԲԽ-39/13 բողոքի վերաբերյալ էական նշանակություն ունեցող փաստերը, ԳԲԽ-39/13 բողոքը քննող հանձնաժողովի հիմնավորումները և եզրահանգումները.</u>

Հանձնաժողովն ուսումնասիրել է «Էլդոգար» ՍՊԸ-ի (այսուհետև՝ նաև Բողոքաբեր ընկերություն) կողմից 20.08.2013թ. ներկայացված բողոքը, Քարահունջի գյուղապետարանի (այսուհետև՝ նաև Պատվիրատու) 26.08.2013թ. N 0-3/31 գրությունը և գրությանը կից փաստաթղթերը, «ՍՄՔԳ-ՊԸԱՇՁԲ-13/1» ծածկագրով պարզեցված ընթացակարգի հրավերը (այսուհետև՝ նաև Հրավեր), «ՍՄՔԳ-ՊԸԱՇՁԲ-13/1» ծածկագրով պարզեցված

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետև՝ նաև Հանձնաժողով) 10.08.2013թ. ժամը 11:00-ին կայացած նիստի N 2 արձանագրությունը, «ՍՄՔԳ-ՊԸԱՇՁԲ-13/1» ծածկագրով պարզեցված ընթացակարգին մասնակցելու նպատակով «Նյու Թերմ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը, «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի եզրակացությունը:

Քարահունջի գյուղապետարանը վերանորոգման աշխատանքների ձեռքբերման նպատակով կազմակերպել է «ՍՄՔԳ-ՊԸԱՇՁԲ-13/1» ծածկագրով պարզեցված ընթացակարգ (այսուհետև՝ նաև Ընթացակարգ), որին մասնակցելու նպատակով հայտ են ներկայացրել «Էլդոգար» և «Նյու Թերմ» ՍՊԸ-ները:

1. «Էլդոգար» ՍՊԸ-ն Կենտրոնին ներկայացված բողոքով հայտնել է, որ Քարահունջի գյուղապետարանի կողմից վերանորոգման աշխատանքներ ձեռքբերելու նպատակով կազմակերպված «ՍՄՔԳ-ՊԸԱՇՁԲ-13/1» ծածկագրով պարզեցված ընթացակարգի հայտարարությունը հրապարակվել է 01.08.2013թ. և նույն հայտարարությամբ սահմանված է եղել հայտերի ներկայացման վերջնաժամկետ 10.08.2013թ. ժամը 11:00-ն, ինչն էլ հանդիսացել է ոչ աշխատանքային օր (շաբաթ): «Էլդոգար» ՍՊԸ-ն նշել է, որ հրավերով սահմանված կարգով նախապես ներկայացրել է իր հայտը, սակայն հաշվի առնելով, որ 10.08.2013թ. ոչ աշխատանքային օր է, Քարահունջի գյուղապետարան են ներկայացել հայտերի բացման նիստին երկուշաբթի՝ 12.08.2013թ. ժամը 10:00-ին և պարզել, որ գնահատող հանձնաժողովը հայտերը բացել է 10.08.2013թ. և հաղթող ճանաչել «Նյու Թերմ» ՍՊԸ-ին:

Պատվիրատուն Կենտրոնին 26.08.2013թ. ներկայացրած N 0-3/31 գրությամբ հայտնել է, որ չի առարկում «ՍՄՔԳ-ՊԸԱՇՁԲ-13/1» ծածկագրով պարզեցված ընթացակարգը չեղյալ հայտարարելուն, քանի որ գնահատող հանձնաժողովը հայտերը բացել է 10.08.2013թ.-ի ժամը 11:00-ին, որը ոչ աշխատանքային օր է:

1-ին կետի վերաբերյալ.

Քարահունջի գյուղապետարանի կողմից վերանորոգման աշխատանքների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՍՄՔԳ-ՊԸԱՇՁԲ-13/1» ծածկագրով պարզեցված ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտ են ներկայացրել «Նյու Թերմ» ՍՊԸ-ն, «Սավադ» ՍՊԸ-ն և «Էլդոգար» ՍՊԸ-ն:

Ընթացակարգի հայտարարությամբ հայտերի ներկայացման վերջնաժամկետ է սահմանվել 10.08.2013թ. ժամը 11:00-ն:

Հրավերի 7.1 կետի համաձայն՝ հայտերի բացումը կկատարվի գնահատող հանձնաժողովի հայտերի բացման նիստում՝ նույն ընթացակարգի հայտարարությունը և

Իրավերը տեղեկագրում հրապարակվելու պահից հաշված 10-րդ օրվա ժամը 11:00-ին, Սյունիքի մարզ, գ. Քարահունջ, փողոց 10/14 հասցեում:

Հանձնաժողովի 10.08.2013թ. ժամը 11:00-ին կայացած նիստի N 2 արձանագրությամբ արձանագրվել է, որ գնահատող հանձնաժողովի նիստը տեղի է ունեցել 10.08.2013թ. ժամը 11:00-ին, որը ոչ աշխատանքային (շաբաթ) օր է:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 329-րդ հոդվածի համաձայն, եթե ժամկետի վերջին օրը համընկնում է ոչ աշխատանքային օրվան, ապա ժամկետի ավարտի օր է համարվում դրան հաջորդող աշխատանքային օրը:

«Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 83-րդ հոդվածի համաձայն, եթե ժամկետի վերջին օրը համընկնում է ոչ աշխատանքային օրվա, ապա ժամկետի ավարտի օր է համարվում դրան հաջորդող աշխատանքային օրը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ նաև Օրենք) 30-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը բացվում են հրավերով նշված պահին հայտերի բացման նիստում, իսկ հայտերի բացման օրը և ժամը պետք է համընկնեն դրանք ներկայացնելու վերջնաժամկետին:

ՀՀ կառավարության 10.02.2011թ. N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետև նաև՝ Կարգ) 111-րդ կետի համաձայն՝ պարզեցված ընթացակարգով գնում կատարելու դեպքում կիրառվում են «Գնումների մասին» ՀՀ օրենքի 24-ից 37-րդ հոդվածներով և նույն կարգով նախատեսված պայմանները՝ հաշվի առնելով նույն կետով սահմանված առանձնահատկությունները:

Կարգի 111-րդ կետի՝

3-րդ ենթակետի համաձայն՝ հայտերը ներկայացնելու համար նախատեսվող ժամկետը պետք է պակաս չլինի տասն օրացուցային օրվանից, որը հաշվարկվում է տեղեկագրում գնումների մասին հայտարարության հրապարակման օրվանից,

6-րդ ենթակետի համաձայն՝ հայտերը բացվում են «Գնումների մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի համաձայն:

Գնումների բողոքարկման խորհուրդը գտնում է, որ Պատվիրատուի կողմից խախտվել են ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 329-րդ հոդվածով, «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 83-րդ հոդվածով, «Գնումների մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասով և Կարգի 111-րդ կետով սահմանված պահանջները, քանի որ հայտերի բացման վերջնաժամկետը համընկել է ոչ աշխատանքային օրվա հետ և այն չի տեղափոխվել դրան հաջորդող աշխատանքային օրը: Բացի այդ, հայտերը բացվել են 10.08.2013թ., մինչդեռ Ընթացակարգի հայտարարությունը հրապարակվել է 01.08.2013թ. և Կարգի 111-րդ կետով

սահմանված՝ հայտերի ներկայացման տասներորդ օրացուցային օրը լրանում էր 11.08.2013թ.:

Գնումների բողոքարկման խորհուրդը գտնում է, որ այս հիմքով բողոքն հիմնավոր է:

2. «Էլդոգար» ՍՊԸ-ն Կենտրոնին ներկայացված բողոքով հայտնել է, որ «Նյու Թերմ» ՍՊԸ-ի շինարարության իրականացում ըստ քաղաքաշինության բնակելի, հասարակական և արտադրական ոլորտի լիցենզիայի ներդիրում որպես որակավորված մասնագետ նշված է եղել Էդգար Էլյազյանի (անձ. AE 0402192) անունը, ով հանդիսանում է «Էլդոգար» ՍՊԸ-ի տնօրենը և լիցենզավորված մասնագետը: Բողոքաբեր ընկերությունը Ընթացակարգի գնահատող հանձնաժողովին տեղեկացրել է, որ Էդգար Էլյազյանը բացի «Էլդոգար» ՍՊԸ-ից ոչ մի այլ ընկերության, այդ թվում նաև «Նյու Թերմ» ՍՊԸ-ում չի աշխատում, հետևաբար «Նյու Թերմ» ՍՊԸ-ն՝ համաձայն իր կողմից ներկայացված N 12994 լիցենզիայի չունի լիցենզիայի համար որակավորված մասնագետ և այդ լիցենզիան պետք է լինի կասեցված, ինչն էլ իր հերթին հակասում է «Նյու Թերմ» ՍՊԸ-ի հայտում առկա հավելված 2-ի 6-րդ կետով կատարված հայտարարությանը:

Բողոքաբեր ընկերությունը խնդրել է «Նյու Թերմ» ՍՊԸ-ի կողմից հայտով ներկայացված N 12994 լիցենզիան համարել կեղծ տեղեկատվություն և ապահովել պատվիրատուի ղեկավարի, գնահատող հանձնաժողովի կողմից ընթացակարգի մասնակցի կողմից կեղծ տեղեկություններ ներկայացնելու համար Հրավերի 8.5 կետով սահմանված գործառույթների իրականացումը:

Պատվիրատուն Կենտրոնին 26.08.2013թ. ներկայացրած N 0-3/31 գրությամբ հայտնել է, որ «Նյու Թերմ» ՍՊԸ-ն ներկայացրել է համապատասխան լիցենզիա և գնահատող հանձնաժողովը թերություններ չի հայտնաբերել:

2-րդ կետի վերաբերյալ.

Քարահունջի գյուղապետարանի կողմից կազմակերպված «ՍՄՔԳ-ՊԸԱՇՁԲ-13/1» ծածկագրով ընթացակարգի հրավերի 1-ին մասի գնման առարկայի բնութագիրը բաժնում սահմանված է, որ նախատեսված աշխատանքների կատարման համար պահանջվում է քաղաքաշինության՝ բնակելի, հասարակական և արտադրական ոլորտի շինարարության իրականցման լիցենզիա:

«Նյու Թերմ» ՍՊԸ-ն Ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտով ներկայացրած պարզեցված ընթացակարգի հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին իր տվյալների համապատասխանության մասին հայտարարության 6-րդ կետով հայտնել և հավաստել է, որ ունի համապատասխան գործունեություն իրականացնելու համար պահանջվող լիցենզիա՝ կցելով ՀՀ

քաղաքաշինության նախարարության կողմից 03.04.2009թ. տրված «բնակելի, հասարակական և արտադրական» գործունեության ոլորտի N 12994 լիցենզիան, որի ներդիրում որպես մասնագետ նշված է Էդգար Էլյազյանի անունը:

ՀՀ քաղաքաշինության նախարարության կողմից «Նյու Թերմ» ՍՊԸ-ին տրված N 12994 լիցենզիան և լիցենզիայի ներդիրը գործում են անժամկետ:

Կենտրոնը 28.08.2013թ. N 04/032-1203 գրությամբ դիմել է ՀՀ քաղաքաշինության նախարարության «Լիցենզավորման կենտրոն» գործակալությանը՝ խնդրելով հայտնել, թե արդյոք «Նյու Թերմ» ՍՊԸ-ն կարո՞ղ էր «ՍՄՔԳ-ՊԸԱՇՁԲ-13/1» ծածկագրով պարզեցված ընթացակարգի հայտով ներկայացնել ՀՀ քաղաքաշինության նախարարության կողմից 03.04.2009թ. տրված «բնակելի, հասարակական և արտադրական» գործունեության ոլորտի N 12994 լիցենզիան որպես գործող լիցենզիա:

ՀՀ քաղաքաշինության նախարարության «Լիցենզավորման կենտրոն» գործակալությունը Կենտրոնին 06.09.2013թ. ներկայացրած N 22.1/5497-13 գրությամբ հայտնել է, որ «Նյու Թերմ» ՍՊԸ-ին 2009 թվականի ապրիլի 3-ին տրված շինարարության իրականացում՝ ըստ «Բնակելի, հասարակական և արտադրական» ոլորտի թիվ 129994-01 լինցեզիայի ներդիրում, համապատասխան փաստաթղթեր ներկայացնելուց հետո, որպես մասնագետ նշվել է Էդգար Էլյազյանը:

«Լիցենզավորման կենտրոն» գործակալությունը հայտնել է նաև, որ «Նյու Թերմ» ՍՊԸ-ի կողմից 2013թ. օգոստոսի 22-ին ներկայացված լիցենզիային կից տրամադրված ներդիրի փոփոխության հայտի հիման վրա՝ ՀՀ քաղաքաշինության նախարարի 2013 թվականի օգոստոսի 28-ի թիվ 270 հրամանով, թիվ 12994-01 ներդիրը փոխարինվել է և Էդգար Էլյազյանի փոխարեն որպես մասնագետ նշվել է Սուրեն Հովիկի Շահնազարյանը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի՝

- 1-ին մասի 4-րդ կետի բ. ենթակետի համաձայն՝ Մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե հայտը ներկայացնելու պահին նախորդող տարվա ընթացքում գնման գործընթացի շրջանակում ներկայացրել է կեղծ տվյալ,
- 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը պաշտոնական ընթացակարգ է նախաձեռնում գնումների բողոքարկման խորհրդում:

Գնումների բողոքարկման խորհուրդը գտնում է, որ Բողոքաբեր ընկերության՝ «Նյու Թերմ» ՍՊԸ-ի հայտով ներկայացրած N 12994 լիցենզիան կեղծ տեղեկատվություն

համարելու և պատվիրատուի ղեկավարի, գնահատող հանձնաժողովի կողմից ընթացակարգի մասնակցի կողմից կեղծ տեղեկություններ ներկայացնելու համար Հրավերի 8.5 կետով սահմանված գործառույթների իրականացումն ապահովելու պահանջը վերաբերելի չէ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 48-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված՝ Գնումների բողոքարկման խորհրդի լիազորություններին և բողոքն այս հիմքով հիմնավոր չէ:

Վերոգրյալի հիման վրա և հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 48-րդ հոդվածի 6-րդ մասի 2-րդ կետը գնումների բողոքարկման խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. «Էլդոգար» ՍՊԸ-ի կողմից 20.08.2013թ. Կենտրոնին ներկայացված բողոքը բավարարել մասնակի՝ դադարեցնել ՀՀ Սյունիքի մարզի Քարահունջի գյուղապետարանի կողմից Քարահունջ համայնքի մշակույթի տան վերանորոգման աշխատանքների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՍՄՔԳ-ՊԸԱՇՁԲ-13/1» ծածկագրով պարզեցված ընթացակարգը:

2. «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին առաջարկել ՀՀ Սյունիքի մարզի Քարահունջի գյուղապետարանի կողմից Քարահունջ համայնքի մշակույթի տան վերանորոգման աշխատանքների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՍՄՔԳ-ՊԸԱՇՁԲ-13/1» ծածկագրով պարզեցված ընթացակարգին «Նյու Թերմ» ՍՊԸ-ի հայտով ներկայացված N 12994 լիցենզիան կեղծ տեղեկատվություն համարելու վերաբերյալ ձեռնարկել գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված միջոցները:

Գնումների բողոքարկման խորհրդի որոշումն իրավապարտադիր է:

Գնումների բողոքարկման խորհրդի կայացրած որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

Բողոքը քննող հանձնաժողովի՝

Նախագահ՝ Գայանե Գասպարյան

Անդամներ՝ Սեդրակ Վարդանյան

Հովհաննես Սերայդարյան